ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N3

N ՀՀ ՆԳՆ ՄԱԾՁԲ-2025/Ա-48
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան «06». «08». 2025թ.

ՀՀ ներքին գործերի նախարարությունը, ի դեմս ՀՀ ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղար Ա. Ֆիդանյանի, որը գործում է ՀՀ ներքին գործերի նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ՀՀ ԱՆ «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն»ՓԲԸ-ն (այսուհետ՝ Կատարող) ի դեմս Ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Վարդազարյանի, հիմք ընդունելով 14.02.2025 թվականին կնքված ՀՀ ՆԳՆ ՄԱԾՁԲ-2025/Ա-48 գնման Պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.5 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը /այսուհետև՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին.

1.Համաձայնագրի վճարման կարգը

1.1 Սույն Համաձայնագրով Կողմերը համաձայնության եկան և հաստատեցին ՀՀ ՆԳՆ ՄԱԾՁԲ-2025/Ա-48 ծածկագրով գնման պայմանագրի 4.1 կետով սահմանված 20 000 000 (քսան միլիոն) ՀՀ դրամ գումարին ավելացնել ևս 3 500 000 (երեք միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, որի արդյունքում ընդհանուր գումարը կկազմի 33 500 000 (երեսուներեք միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, հիմք ընդունելով՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 56-րդ կետի 2-րդ ենթակետը, որի վճարումը պատվիրատուի կողմից կիրականացնի սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ին համապատասխան: Գումարը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, ինչպես նաև Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

1.2 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

1.3 Համաձայնագրի պայմանները կիրառվում են նաև պայմանագիրը կնքելուց հետո մինչև սույն համաձայնագրի կնքելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, Ծառայության մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է (2) երկու էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

2.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն պարտականություններն իրականացնում է ՀՀ ներքին գործերի նախարարությունը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ներքին գործերի նախարարություն	ՀՀ ԱՆ «Կախվածությունների բուժման
ք. Երևան, Նալբանդյան 130	ազգային կենտրոն» ՓԲԸ
ՀՀ Ֆինանսների նախարարության	հասցե՝ ք. Երևան, Աճառյան 2-րդ նրբ.,
գործառնական վարչություն	շենք 2
Հ/Հ 900011042471	Բանկ՝ ԱյԴի բանկ ՓԲԸ
ՀՎՀՀ 02882913	Հ/Հ 1813017106900
Հեռ. 010 59-61-52	ՀՎՀՀ 00886932
Էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am	Հեռ. 012272727
	Էլ. Փոստ՝ ncat.gnumner@mail.ru
Ա. Ֆիդանյան	Գ. Վարդազարյան
ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար/	տնօրենի ժամանակավոր
(ստորագրություն)	պաշտոնակատար/
Կ.Տ	

Հավելված N 1
<<06>>08 2025թ.
ՀՀ ՆԳՆ ՄԱԾՁԲ-2025/Ա-48 ծածկագրով գնման պայմանագրի

Վճարման ժամանակացույց

Ծառայության																
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**													
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	85111120/1	Հիվանդանոցների կողմից մատուցվող բժշկական ծառայություններ								3 500 000	3 500 000	3 500 000	3 500 000	3 500 000	3 500 000

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ
ՀՀ ներքին գործերի նախարարություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011042471
ՀՎՀՀ 02882913
Հեռ. 010 59-61-52
Էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am
Ա. Ֆիդանյան
/ ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար/
(ստորագրություն)
Կ.Տ

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
ՀՀ ԱՆ «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ
հասցե՝ ք. Երևան, Աճառյան 2-րդ նրբ., շենք 2
Բանկ՝ ԱյԴի բանկ ՓԲԸ
Հ/Հ 11813017106900
ՀՎՀՀ 00886932
Հեռ: 012272727
Էլ. Փոստ: ncat.gnumner@mail.ru
Ս. Գասպարյան
/տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար/
(ստորագրություն)
Կ.Տ)